«HOUSAPER»
Armenian Daily
Since 1913 - Cairo
Published By
«Housaper» Cultural Assoc.
Registered At
Ministry Of Social Affairs
Under No. 67/636

# ՅՈՒՍԱԲԵՐ
ՕՐԱԹԵՐԹ

هوســابير
جريدة يومية ارمنية تأسست عام ١٩١٣ بالقاهرة
صاحب الامتياز جمعية ثقافة الارمنية "هوسابير"
المسجلة لدى وزارة الشئون الاجتماعية
برقم ٦٣٦ / ٦٧

Հիմնադրուած՝ 1913-ին – Հիմնադիր՝ Արմենակ Մէօթէմէտեան

ԵՐԵՔՇԱԲԹԻ, 26 ՄԱՐՏ 2024, 109-ՐԴ ՏԱՐԻ, ԹԻՒ 223

الثلاثاء ٢٦ مارس ٢٠٢٤ - السنة ١٠٩ - العدد رقم ٢٢٣

## Բրիւսէլում բացուել է ՀՅԴ Հայ դատի Եւրոպայի յանձնախմբի նոր գրասենեակը

*Մարտի 24-ին Բրիւսէլում տեղի է ունեցել ՀՅԴ Հայ դատի Եւրոպայի յանձնախմբի նոր գրասենեակի բացման արարողութիւնը. նշանակալի իրադարձութիւն նրա հիմնադրութիւնից՝ 2002 թուականից ի վեր:*

*Ի խորհրդանշում Հայ դատի առաքելութեան օժանդակման՝ կարմիր ժապաւէնը կտրել են Մայք եւ Էվելինա Սարեանները, որոնց ընտանիքի առատաձեռն նուիրատուութեան շնորհիւ էլ ձեռք է բերուել նոր գրասենեակը: Բացման արարողութեանը ներկայ են գտնուել տասնեակ հիւրեր, այդ թւում՝ ՀՅԴ Հայ դատի Եւրոպայի գրասենեակի երկարամեայ բարերարներ Րաֆֆի Արսլանեանը եւ Ատոմ Թնջուկեանը, ՀՅ Դաշնակցութեան Բիւրոյի ներկայացուցիչ եւ Հայ դատի յանձնախմբերի կենտրոնական խորհրդի նախագահ Յակոբ Տէր-Խաչատուրեանը, Եւրոպական միութիւնում ՀՀ առաքելութեան ղեկավարի տեղակալ Վարդան Սարգսեանը, բելգիացի պատգամաւորներ, լրագրողներ, հասարակական գործիչներ, ինչպէս նաեւ Բելգիայի, Կիպրոսի, Ֆրանսիայի, Գերմանիայի, Նիդեռլանդների, Ռումինիայի եւ Միացեալ Թագաւորութեան հայ համայնքների ներկայացուցիչներ:*

*Բացման արարողութեանը յաջորդած ընդունելութեան ընթացքում հնչած ելոյթներում երախտագիտութեան խօսքեր են ձօնուել բոլոր նրանց, ովքեր իրենց ներդրումն են ունեցել եւ ունենում ՀՅԴ Հայ դատի Եւրոպայի գրասենեակի աշխատանքներին: Ներկաները, կարեւորելով Հայ դատի Եւրոպայի գրասենեակի դերը առհասարակ Հայ դատի պաշտպանութեան գործում, իրենց բարեմաղթանքներն են յղել գրասենեակի ամենօրեայ տքնաջան աշխատանքին:*

*Մայք Սարեանը, անդրադառնալով օրուայ խորհրդին, նշել է. «Իսկապէս մեծ պատիւ է Բրիւսէլում նուիրաբերութիւն կատարել ՀՅԴ Հայ դատի Եւրոպայի գրասենեակին՝ ի յիշատակ մեր հօր՝ Երջանիկ Սարեանի: Երջանիկը, որը հայերէն նշանակում է «երջանիկ», մարմնաւորում է մեր իղձը, այն է՝ այս գրասենեակը երջանկութեան աղբիւր դառնայ բոլոր այն հայերի համար, ովքեր հաւատարիմ են Հայ դատի առաջխաղացմանն ամբողջ աշխարհում եւ յատկապէս Եւրոպայում: Մեծ յաջողութիւններ ենք մաղթում գրասենեակի անձնակազմին եւ մեր համայնքի անդամներին՝ յուսալով, որ աւելի շատ ձեռքբերումներ կ'ունենանք այս մօտ օրերում»:*

*ՀՅԴ Հայ դատի Եւրոպայի գրասենեակի նախագահ Գասպար Կարապետեանն իր խորին երախտագիտութիւնը յայտնելով Մայք Սարեանին եւ նրա ընտանիքին՝ նշել է. «Խորապէս շնորհակալ ենք պարոն Սարեանին եւ նրա ընտանիքին իրենց առատաձեռնութեան համար:*



*Իսկապէս պատիւ է, որ մեր գրասենեակը կրում է հանգուցեալ Երջանիկ Սարեանի անունը: Այս գրասենեակը խորհրդանշում է բոլորիս տունը՝ նուիրուած հայ ժողովրդին եւ հայ ժողովրդին ծառայելուն, առաջ մղելով հայ դատի պայքարը: Մենք հաւատարիմ ենք այդ նպատակին»:*

*Նոր գրասենեակի բացումը նշանակալից առաջընթաց է Հայ դատի գրասենեակի համար եւ վերջինս վերահաստատում է իր յանձնառութիւնը հայկական պետականութեան առաջխաղացման եւ Եւրոպայում Արցախի ժողովրդի հիմնարար իրաւունքների պաշտպանութեան գործում:*

**ՀՅԴ Բիւրոյի Հայ դատի
կենտրոնական գրասենեակ**

## ՄԱԿ-ի Ապ. խորհուրդը Կազայի մէջ անյապաղ հրադադար հաստատելու բանաձեւ որդեգրած է




*Պատերազմը սկսելէ աւելի քան հինգ ամիս ետք ՄԱԿ-ի Ապահովութեան խորհուրդը Մարտի 25-ին վերջապէս որդեգրեց իր առաջին բանաձեւը, որ կոչ կ'ուղղէ «անյապաղ հրադադար» հաստատել Կազայի մէջ, մինչ Մ. Նահանգները ձեռնպահ քուէարկեց, բանաձեւի ընդունման նախորդ փորձերը վեթոյով խոչընդոտելէ ետք:*

*Բանաձեւը, որուն կողմ քուէարկած են 14 անդամներ, «կը պահանջէ անյապաղ հրադադար հաստատել Ռամաթան ամսուան ընթացքին», որ սկսած է երկու շաբաթ առաջ՝ պայմանով, որ անիկա «յանգի մնայուն հրադադարի», միաժամանակ «պահանջելով բոլոր պատանդներու անյապաղ եւ անվերապահ ազատում արձակումը»:*

*ԱՄՆ վեթոյի իրաւունքը չկիրառելով եւ ձեռնպահ քուէարկելով՝ զայն վերածեց հրադադարի մասին Ապ. Խորհուրդի որդեգրած առաջին բանաձեւը նախորդ չորս ձախողումներէն ետք:*

*Բանաձեւի վերջին նախագիծը ձախողած էր անցած Ուրբաթ, երբ Չինաստան եւ Ռուսիա իրենց վեթոյի իրաւունքն օգտագործած էին ամերիկեան առաջարկի դէմ: Անհամաձայնութիւնը կ'առնչուէր հրադադարի կոչը պատանդներու գործարքին կապելու եւ ՀԱՄԱՍ-ի դատապարտման ամերիկեան պնդումներուն հետ:*

*Ստորեւ՝ որդեգրուած բանաձեւի կարեւոր կէտերը.*

*– Խորհուրդը կը պահանջէ «անյապաղ հրադադար հաստատել Ռամաթան ամսուն, որ յարգուի բոլոր կողմերէն՝ յանգեցնելով մշտական եւ կայուն հրադադարի»:*

*– Կը պահանջէ «անյապաղ եւ անվերապահ ազատ արձակել բոլոր պատանդներուն, ինչպէս նաեւ ապահովել մարդասիրական օգնութիւնը՝ անոնց բժշկական եւ այլ մարդասիրական կարիքները բաւարարելու համար», «որ կողմերը կատարեն միջազգային իրաւունքով նախատեսուած իրենց պարտաւորութիւնները բոլոր այն մարդոց հանդէպ, որոնց կալանաւոր են»:*

*– Խորհուրդը կը շեշտէ «հրատապ անհրաժեշտութիւնը ընդլայնելու մարդասիրական օգնութեան հոսքը խաղաղ բնակիչներուն եւ ուժեղացնել անոնց պաշտպանութիւնը ամբողջ Կազայի հատուածին մէջ»:*

*– Բանաձեւը կոչ կ'ուղղէ համատարած ջնջել մարդասիրական օգնութիւն տրամադրելու բոլոր խոչընդոտները՝ համաձայն միջազգային մարդասիրական իրաւունքի, ինչպէս նաեւ 2712 (2023) եւ 2720 (2023) բանաձեւերուն:*

- *Զուգահեռաբար, հաղորդուեցաւ որ Տոհայի մէջ Իսրայէլի եւ ՀԱՄԱՍ-ի միջեւ ժամանակաւոր հրադադարի եւ պատանդներու փոխանակման բանակցութիւններու հերթական փուլի աւարտին, հաղորդուեցաւ որ անոնք չեն եզրայանգած, թէեւ նշուեցաւ իսրայէլեան կեցուածքին մէջ դրական շարժի մասին:*
- *Միւս կողմէ, Իսրայէլի վարչապետ Բենիամին Նեթենիահու ջնջած է իսրայէլեան պատուիրակութեան մը Ուաշինկթըն այցելութիւնը, հակադարձելով Ապ. Խորհուրդի բանաձեւին դէմ վեթոյի իրաւունքը չօգտագործելու Ուաշինկթընի որոշումին: Այս մասին Նեթանիահու նախապէս ազդարարած էր: ■*

## Արցախի վերաբերեալ քննարկումներ Բելգիայի Սենատում



*Բելգիայի Սենատում Մարտի 25-ին տեղի է ունեցել «Աշխարհաքաղաքական զարգացումները Հարաւային Կովկասում. կիզակէտում Հայաստանը եւ Լեռնային Ղարաբաղը/Արցախը» խորագրով կլոր սեղան-քննարկում: Քննարկումը կայացել է սենատոր Մարկ Դեմեսմէյքերի եւ ՀՅԴ Հայ դատի Եւրոպայի գրասենեակի համագործակցութեան արդիւնքում, որին մասնակցել են բելգիացի խորհրդարանականներ, դիւանագէտներ, լրագրողներ եւ քաղաքացիական հասարակութեան ներկայացուցիչներ:*

*Կլոր սեղանի չորս հիմնական բանախօսներն էին.*

- *Էլս Վան Հուֆ՝ Բելգիայի դաշնային խորհրդարանի արտաքին յարաբերութիւնների յանձնաժողովի նախագահ*
- *Փոլ Միերթս՝ միջազգային բանակցութիւնների վերլուծաբան եւ Քլինգենդաել ինստիտուտի համահիմնադիր*
- *Գեղամ Ստեփանեան՝ Արցախի Հանրապետութեան մարդու իրաւունքների պաշտպան*
- *Բենիամին Պօղոսեան՝ «ԱՊՐԻ Արմենիա» հիմնադրամի աւագ գիտաշխատող*

*Համաժողովի առաջնային նպատակն էր համապարփակ վերլուծութեան ենթարկել 2020 թուականի Սեպտեմբերից ի վեր Հարաւային Կովկասի տարածաշրջանում աշխարհաքաղաքական զարգացումները, մասնաւորապէս՝ Արցախեան հակամարտութեան լոյսի ներքոյ: Բանախօսները միջազգային իրաւունքի, մարդու իրաւունքների եւ միջազգային հանրութեան արձագանգի տեսանկիւններից ներկայացրել են տարածաշրջանային զարգացումները: Յատուկ ուշադրութեան են արժանացել միջնորդական ջանքերի կարեւորութեան վերաբերեալ քննարկումները՝ անդրադարձ կատարելով յատկապէս Եւրոպական միութեան դերին: Քննարկման մասնակիցները փորձել են նախանշել ապագայ հեռանկարները, հնարաւոր զարգացումները եւ կոնկրետ քայլերը՝ Արցախի հայերի անօտարելի իրաւունքները պաշտպանելու համար:*

*Միջոցառումը մեկնարկել է սենատոր Դեմեսմէյքերի, Եւրոպական միութիւնում ՀՀ ներկայացուցչութեան ղեկավարի տեղակալ Վարդան Սարգըսեանի եւ ՀՅԴ Հայ դատի Եւրոպայի գրասենեակի նախագահ Գասպար Կարապետեանի բացման խօսքերով:*

*Մասնաւորապէս, Մարկ Դեմեսմէյքերը նշել է. «Այցելելով Լեռնային Ղարաբաղ եւ Ադրբեջանի հետ սահմանամերձ շրջան՝ անմիջականօրէն եմ տեսել հակամարտութեան ազդեցութիւնը: Ադրբեջանի ագրեսիան եւ Արցախի էթնիկ զտումները միանգամայն անընդունելի են: Մենք պէտք է ճնշում գործադրենք ԵՄ-ի եւ միջազգային հանրութեան վրայ՝ վերջ տալու անպատժելիութեանը: Կարեւոր է՝ Մերձաւոր Արեւելքի եւ Ուկրաինայի վրայ կենտրոնացած լինելու պայմաններում, չանտեսել Հարաւային Կովկասը: Մենք չենք կարող անտեսել այս տարածաշրջանի տառապանքն ու անկայունութիւնը»:*

*Իր խօսքում Էլս Վան Հուֆը, մասնաւորապէս նշել է. «Վերջերս Արցախի խորհրդարանի շէնքի քանդումը խորհրդանշում է Ադրբեջանի կողմից շարունակուող «մշակութային զտումը»: Մենք չենք կարող լռել այս հարցում: ԵՄ-ն պէտք է վերագնահատի իր յարաբերութիւններն Ադրբեջանի հետ եւ օգտագործի իր քաղաքական գործիքակազմը՝ դադարեցնելու հայերի հիմնարար իրաւունքների խախտումները: Պատժամիջոցներ կիրառելու տարբերակը պէտք է դիտարկել եւրոպական մակարդակում»:*

*Իր հերթին Փոլ Միերթսը, անդրադառնալով բանակցային գործընթացին, նշել է. «Բանակցութիւնները յաջողութեամբ աւարտելու համար պէտք է համատեքստի փոփոխութիւն լինի: Ուժն ու բանակցութիւնները միասին են ընթանում: Հայաստանը չի կարող բանակցութիւնների մէջ մտնել թուլացած դիրքերից: Այսպիսով՝ Հայաստանի համար հրամայական է ուժեղացնել իր ռազմական հնարաւորութիւնները եւ ամրապնդել իր դիրքերը բանակցային սեղանի շուրջ տարածաշրջանում կայունութեան համար»:*

*Արցախի Հանրապետութեան մարդու իրաւունքների պաշտպան Գեղամ Ստեփանեանն անդրադարձել է Արցախի ժողովրդի առջեւ ծառացած շարունակական մարտահրաւէրներին. «Լեռնային*

(Շար.ը Գ. էջ)

## Փաշինեան եւ Կոբախիձէ քննած են հայ-վրացական սահմանազատման գործընթացը

*Հայաստանի եւ Վրաստանի վարչապետները քննած են երկու երկիրներու սահմանազատման գործընթացն աշխուժացնելու հնարաւորութիւնները, Մարտ 25-ին Երեւանի մէջ վրացի պաշտօնակցին հետ համատեղ ասուլիսին յայտարարած է վարչապետ Նիկոլ Փաշինեան:*

*Ան յիշեցուցած է, որ Յունուարի 26-ին Հայաստան եւ Վրաստան ռազմավարական գործընկերութեան համատեղ հռչակագիր ստորագրած են:*

*«Այսօր գործընկերոջս հետ առիթ ենք ունեցել քննարկելու այս համատեղ հռչակագրի գործնական իրագործման ուղղութեամբ հնարաւոր եւ անհրաժեշտ քայլերը: Ուզում եմ ընդգծել, որ այդ հռչակագրում էական է միմեանց տարածքային ամբողջականութեան եւ ինքնիշխանութեան անվերապահ ճանաչումը: Այսօր մենք նաեւ քննարկել ենք Հայաստանի եւ Վրաստանի միջեւ սահմանազատման գործընթացի ակտիւացման հնարաւորութիւնները», ըսած է Փաշինեան:*



*Ան նշած է, որ Հայաստանի մէջ ոգեւորութեամբ արձագանգած են Վրաստանի՝ Եւրոպական Միութեան անդամութեան թեկնածուի կարգավիճակ ստանալու լուրին. «Այն անմիջական ազդեցութիւն է ունենալու ոչ միայն մեր տարածաշրջանի, այլեւ Հայաստան-Վրաստան երկկողմ յարաբերութիւնների վրայ: ՀՀ-ն սատարել եւ սատարում է Եւրոմիութեանն անդամագրուելու Վրաստանի ձգտումներին»:*

*Նիկոլ Փաշինեանը Վրաստանի վարչապետին ներկայացուցած է նաեւ Հայաստանի եւ Ատրպէյճանի միջեւ յարաբերութիւններու կարգաւորման զարգացումները եւ ընթացիկ վիճակը: ■*

ՆՇՄԱՐ

# Սեղմուող թակարդներ



Գրեց՝
ՍԱՐԳԻՍ ՄԱՀՍԷՐԷՃԵԱՆ

Թուրք-ազերիական նախագծումով ու պարտադրանքով, ու Հայաստանի իշխանաւորներուն գործակատարութեամբ, Հայաստանի սահմանները պտիկ-պտիկ կը նեղնան, իւրաքանչիւր մանր քայլափոխի՝ բանավէճը կը ստանայ թշնամիին հաշիւներուն համապատասխանող ընթացք, պատրաստուած թակարդին մէջ կ՚իյնան բոլորը, ներառեալ՝ ընդդիմադիրները, սահմանագէտները, պատմագէտներն ու աշխարհագրագէտները:

Թակարդին նորագոյն օղակը, մի՛շտ սեղմուող օղակը, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՔԱՅԼ ԱՌ ՔԱՅԼ ԿՐՃԱՏՈՂ ՕՂԱԿԸ հիմա հրապարակի վրայ է. Տաւուշի շրջանէն չորս գիւղերու պատկանելիութեան հարցը՝ զանոնք անյապաղ Ատրպէյճանին յանձնելու փաշինեանական յանձնառութիւնը, «որպէսզի յարձակում տեղի չունենայ»: Յստակ է, չէ՞, որ ան դարձեալ գաղտնի համաձայնութիւն գոյացուցած է Ալիեւի հետ եւ հիմա կը փորձէ զայն «վաճառել» խաղաղութիւն սպասող ժողովուրդին): Մարդիկ մոռցած ու բանավէճէն դուրս ձգած են այն, որ Ատրպէյճան ու զայն դրդող Թուրքիան որեւէ ատեն նման պատճառաբանութիւններու չեն սպասած՝ յարձակումները իրականացնելու եւ հայութեան դարաւոր հայրենիքէն մեծ ու փոքր պատառներ խլելու համար:

***

Պահ մը հեռանանք պատմութենէն ու իրակա՛ն աշխարհագրութենէն, եւ տեսնենք, որ թակարդին նորագոյն «հատորը» ինչպէ՞ս կ՚ընկալուի:

Փաշինեանի եւ խմբակիցներուն ձեռքը տուած են քարտէսներ եւ սահմանային գծանկարներ (որոնք կը ստեղծեն հազար ու մէկ հիմնաւորեալ մտավախութիւն), որոնք առանց այլեւայլի ազերիական շահերուն եւ անարդար պահանջներուն իրականացումը կը հետապնդեն, ու Երեւանի գործակատարները դարձած են այդ բոլորին սուտ վկաները: «Այս քանի մը գիւղերը Ատրպէյճանին պատկանած են այսինչ-այնինչ քարտէսով», կը փորձէ համոզել կառավարութեան (ան)գլուխը, ինչպէս որ աւելի քան տարի մը առաջ վճռեց, որ ամբողջ Արցախը մի՛շտ ալ Ատրպէյճանի պատկանած է (երբեմն նազ-տուզ ալ կ՚ընէ, թէ «նախկիններն էին տուողը»): Եւ ահա, բանավէճը (այսինքն լարուած թակարդը) կը սկսի բանիլ: Հարց կը ծագի, թէ «սահմանագիծ»ը ո՞ր գիւղին քովէն կ՚անցնի, ո՞ր տարածքները պէտք է ընդունիլ իբրեւ ազերիապատկան, ո՞րը՝ հայկական: Կը տեսնե՞նք, որ այս հարցը մենաշնորհին է հայկական քաղաքական բեմին, Ատրպէյճան իսկապէ՛ս որ չէ մտահոգուած նման «մանրուքներով», այլ կը հետապնդէ ամբողջ Հայաստանը կուլ տալու վաղեմի ծրագիրը, իսկ իր գործակատարները ոգեգրած են ժողովուրդը «մասնավճարներով» համոզելու մարտավարութիւնը, որովհետեւ Ատրպէյճանի բոլոր ուզածները միանուագ յանձնելը շատ աւելի բացայայտ պիտի դարձնէ մեծ դաւն ու դաւակիցները:

Ըստ էութեան կը մոռցուի ԱՆՎԻՃԵԼԻ ԻՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ, թէ վէճի սեղանին դրուած հողերը ԱՆԱՌԱՐԿԵԼԻՕՐԷՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԵՆ ԵՂԱԾ, ՀԱՅԿԱԿԱՆ ԵՆ, սակարկութիւնները կը դառնան բացարձակապէս հայապատկան հողերու շուրջ, ինչպէս որ հայկական են Արցախն ու Նախիջեւանը, Արեւմտեան Հայաստանն ու Կիլիկիան: Կը փորձեն, կրկնենք՝ մեր իրաւատէր եւ արդարատենչ ժողովուրդին կոկորդն ի վար հրել թշնամիին համաթուրանական ծրագիրներուն պատառիկները, եւ իւրաքանչիւր պատառիկ կը հրամցնեն «նախորդ կորուստդ մոռցի՛ր»ի տրամաբանութեամբ: Երեւանի իշխանաւորները դար-ձած են թշնամիին ապրանքը վաճառողը, ինչպէս որ շուկան դարձած է թրքական արտադրութեանց սպառման վայր: Ո՞վ կը յիշէ, որ 44-օրեայ պատերազմէն ետք, քանի մը ամիս պաշտօնապէս արգելք դրուեցաւ թրքական արտադրութեանց ներածման դէմ: Հիմա ներածուողը... նեղցո՛ղ թակարդներն են:

***

Բնականաբար հարց կը ծագի. ընդդիմադիրներն ու իսկական բանգէտները, հայրենիքին տիրութիւն ընել վճռողները ի՞նչ կրնան ընել, բացի... իյնալէ իրերայաջորդ թակարդներուն մէջ:

Պատասխանը յստակ է շատո՛նց: Օրակարգի, իսկակա՛ն ու հրատապ օրակարգի վերածել մեր իրաւունքներուն ամբողջական թղթածրարը, անոր շուրջ բոլորել ողջ ազգը, զայն պարտադրել իշխանաւորին, սկսելով անոր հեռացումէն եւ իշխանափոխութենէն, հասնելու համար այն բեմերը, ուր մեր իրաւունքներուն ճանաչումը կերտած է երկար պատմութիւն, ամրագրուած է փաստաթուղթերով եւ միջազգային որոշումներով: Սա կրկին ու կրկին հնչող մարտահրաւէր է Հայաստանի եւ Սփիւռքի հայութեան:

Որքա՛ն ուշանայ այս վճռական քայլը, այնքա՛ն պիտի բազմանան թակարդները, հողերու կորուստները, իսկ թակարդէն դուրս գալն ու վերականգնումը պիտի դառնան աւելի՛ դժուար: Այսօր, հարկադրաբար եւ բնականաբար Տաւուշն է ուշադրութեանց կեդրոնը, վաղը կարգը պիտի գայ Սիւնիքին ու սահմանային այլ շրջաններու: Մինչդեռ, պէտք է տեսնել – եւ ըստ այնմ գործե՛լ – որ այս մասնակի (ո՛չ արհամարհելի) շրջանները խորքին մէջ ուշադրութիւնները կը շեղեն ԲՈՒՆ ՀԱՐՑԷՆ, որն է Հայաստանի ու Արցախի ծանօթ սահմաններուն վերականգնումի պահանջը, եւ այդ՝ իբրեւ հիմնաքար՝ մեր միւս իրաւունքներուն իրականացման: Ո՛չ միայն պէտք չէ տարուիլ թակարդներով, այլ կոտրե՛լ զանոնք սարքող ու գործի դնող բոլոր ձեռքերը:

Ս. ՄԱՀՍԷՐԷՃԵԱՆ
21 Մարտ 2024

# Ահաբեկչութեան լուրջ սպառնալիք Ֆրանսայի մէջ

*Ֆրանսայի իշխանութիւնները ահաբեկչական սպառնալիքի մակարդակը բարձրացուցած են բարձրագոյնի՝ Մոսկուայի ծայրամասային* Crocus City Hall*-ի մէջ տեղի ունեցած ահաբեկչութենէն ետք, յայտարարած է վարչապետ Գաբրիէլ Աթալ:*

*Որոշումը տրուած է Ելիզէի պալատին մէջ Ազգային պաշտպանութեան եւ անվտանգութեան խորհուրդի նիստին, զոր հրաւիրած է նախագահ Էմմանուէլ Մաքրոն: «Հաշուի առնելով այն հանգաման- քը, որ "Իսլամական պետութիւն"ը*



*ստանձնած է յարձակման պատասխանատուութիւնը, եւ մեր երկրի առջեւ ծառացած սպառնալիքները, մենք որոշեցինք ահաբեկչական սպառնալիքի մակարդակը բարձրացնել մինչեւ բարձրագոյնի՝ "յարձակման շտապ սպառնալիք"», գրած է Աթալ* X*-ի էջին:* ■

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

# ՀՄԸՄ "Արարատ"ի վարչութեան նոր կազմը

*Ուրբաթ 22 Մարտ 2024-ին, ներկայութեամբ Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան ներկայացուցիչ՝ եղբայր Վիգէն Աւագեանի, տեղի ունեցաւ Գահիրէի Հ.Մ.Ը.Մ. Արարատ մեկուսի շրջանի անդամական 23-րդ Ընդհանուր ժողովը:*

*Ընթերցուեցան երկամեայ գործունէութեան բարոյական եւ նիւթական տեղեկագիրները, որոնք քննուեցան անդամներուն կողմէ:*

*Անդամներուն կողմէ առաջարկներու բաժնին մէջ, յառաջիկայ վարչութեան գործունէութեան ծիրէն ներս լայն տեղ գտաւ միութեանս հիմնադրութեան 110 ամեակը, որ կը զուգադիպի այս տարուան:*

*Շեշտուեցաւ «Հ.Մ.Ը.Մ. Արցախ հիմնադրամ»ի աջակցութեան անհրաժեշտութիւնը՝ որոշուած Հ.Մ.Ը.Մ.ի Պատգամաւորական 13-րդ ժողովին, որուն նպատակն է օգնութեան հասնիլ Արցախի ողբերգական իրադարձութիւններու հետեւանքով Հայաստան ապաստանած հազարաւոր հայորդիներուն ու մանուկներուն եւ Հ.Մ.Ը.Մ. Արցախ շրջանին, որ կը շարունակէ գործել Հայաստանի մէջ:*

*Աւարտին, ընտրուեցաւ նոր վարչութիւն՝ հետեւեալ կազմով.*



*Եղբ. Լեւոն Դելփեան - Ատենապետ*

*Եղբ. Արա Քէօհնէլեան - Ատենադպիր*

*Եղբ. Ճորճ Թորոսեան - Գանձապահ*

*Եղբ. Գառնիկ Կրպոյեան - Խորհրդական*

*Եղբ. Յակոբ Սայեան - Խորհրդական*

*Եղբ. Նորայր Մխտիկեան - Խորհրդական*

*Քոյր Սանտրա Մունիր - Խորհրդական*

*Ժողովը փակուելէ առաջ, եղբ. Վիգէն Աւագեան շնորհաւորեց նորընտիր վարչութիւնը, շեշտելով թէ սոյն կազմը միջոցն է ժողովին բանաձեւերը իրականացնելու, որուն շուրջ կը հաւաքուին բոլոր անդամները:*

*Ժողովը փակուեցաւ Հ.Մ.Ը.Մ.ի քայլերգով:*

ԳԱՀԻՐԷԻ Հ.Մ.Ը.Մ. ԱՐԱՐԱՏԻ
ԱՆԴԱՄԱԿԱՆ 23-ՐԴ ԺՈՂՈՎԻ ԴԻՒԱՆ

Յայտարարութիւն

# Անհրաժեշտ է քայլեր ձեռնարկել հայ ռազմագերիների իրաւունքների խախտումները կասեցնելու համար

*Հայ ռազմագերիներու՝ Ժընեւեան պայմանագրով ամրագրուած իրաւունքներու ատրպէճանական խախտումները կասեցնելու, Արցախի ժողովուրդի հիմնարար իրաւունքներու պաշտպանութեան յանձնախումբը հետեւեալ յայտարարութիւնը հրապարակած է.*

*«Անհրաժեշտ է անյապաղ քայլեր ձեռնարկել Ադրբեջանի կողմից հայ ռազմագերիների՝ Ժընեւեան կոնվենցիայով ամրագրուած իրաւունքների խախտումները կասեցնելու համար.*



*Արցախի ժողովրդի հիմնարար իրաւունքների պաշտպանութեան կոմիտէն լրջօրէն անհանգստացած է վերջին հաղորդագրութիւններով, որոնք մանրամասն նկարագրում են Ադրբեջանի կողմից հայ ռազմագերիների իրաւունքների կոպտագոյն խախտումները, մասնաւորապէս հանրային հետաքրքրասիրութիւնից զերծ մնալու իրաւունքի հիմնարար սկզբունքի առընչութեամբ, որն ամրագրուած է ռազմագերիների հետ վարուելակերպի մասին Ժընեւի երրորդ կոնվենցիայում: Այս գործողութիւնները ոչ միայն դատապարտելի են բարոյական տեսանկիւնից, այլեւ ուղղակիօրէն հակասում են միջազգային մարդասիրական իրաւունքին:*

*Ժընեւի երրորդ կոնվենցիայի 13-րդ յօդուածն ուղղակիօրէն արգելում է ռազմագերիներին ենթարկուել հանրային հետաքրքրասիրութեան: Ադրբեջանում ռազմագերիներին պատկերող տեսանիւթերի հրապարակային հեռարձակումն այդ կոնվենցիայի համաձայն նրանց անձնական կեանքի եւ արժանապատուութեան անձեռնմխելիութեան իրաւունքի կոպիտ խախտում է: Ժընեւի 4-րդ կոնվենցիայի 27-րդ յօդուածը նոյն կերպ արգելում է նման հրապարակային ցուցադրութիւնները քաղաքացիական անձանց դէմ: Աւելին, այս գործողութիւնները խախտում են Մարդու իրաւունքների համընդհանուր հռչակագիրը, որը հաստատում է գաղտնիութեան եւ անձնական կեանքի, ընտանիքի, բնակարանի կամ նամակագրութեան կամայական միջամտութիւնից պաշտպանուելու իրաւունքը:*

*Ադրբեջանի կողմից հայ ռազմագերիների եւ պատանդների հետ բեմադրուած հարցազրոյցների հեռարձակումը նրանց իրաւունքների ուղղակի խախտում է եւ աւելի է խորացնում նրանց առանց այն էլ ծանր վիճակը: Ադրբեջանի նման մանիպուլատիւ մարտավարութիւնը ծառայում է միջազգային մարդասիրական իրաւունքի ամբողջականութեան խաթարմանը եւ պէտք է անվերապահօրէն դատապարտուի միջազգային հանրութեան կողմից:*

*Այս աղաղակող խախտումների լոյսի ներքոյ կոչ ենք անում պետական գործիչներին եւ իրաւապաշտպան կազմակերպութիւններին ուղղակի միջոցներ ձեռնարկել՝ թոյլ չտալու Ադրբեջանին հետագայում հեռարձակել ռազմագերիների եւ պատանդների հետ տեսանիւթեր կամ հարցազրոյցներ: Սա ներառում է դիւանագիտական ուղիների օգտագործում, անհրաժեշտութեան դէպքում պատժամիջոցների կիրառում եւ հրապարակային դատապարտում՝ Ադրբեջանին իր գործողութիւնների համար պատասխանատուութեան ենթարկելու համար:*

*Մենք վճռականօրէն ընդգծում ենք, որ այլ մասնակից պետութիւնների կողմից նման տեսագրութիւնների ցանկացած վերահեռարձակում թոյլ տալն ինքնին ոչ միայն Ժընեւեան երրորդ եւ չորրորդ կոնվենցիաների կոպիտ խախտում է, այլ նաեւ մարդասիրական իրաւունքի հիմնական սկզբունքների դատապարտելի անտեսում: Հետեւաբար, չափազանց կարեւոր է, որ մասնակից բոլոր պետութիւնները հրատապ եւ վճռական գործողութիւններ ձեռնարկեն՝ կանխելու ադրբեջանական նման տեսանիւթերի որեւէ վերահեռարձակ իրենց իրաւասութեան տակ գտնուող սերվերների, լրատուամիջոցների հարթակներում:*

*Աւելին, մենք պահանջում ենք միջազգային մարդասիրական կազմակերպութիւններին, ինչպիսին է Կարմիր Խաչի միջազգային կոմիտէն, անյապաղ եւ անարգել մուտք գործել բոլոր կալանավայրեր, որտեղ պահւում են հայ ռազմագերիներն ու պատանդները: Դա կարեւոր է այդ անձանց բարեկեցութեան եւ պատշաճ վերաբերմունքի ապահովման համար, ինչն ամրագրուած է Ժընեւի կոնվենցիաներով եւ մարդու իրաւունքների այլ կիրառելի միջազգային պայմանագրերով՝ ներառեալ Քաղաքացիական եւ քաղաքական իրաւունքների մասին միջազգային դաշնագիրը եւ Խոշտանգումների եւ այլ դաժան, անմարդկային կամ այլ տեսակի արժանապատուութիւնը նուաստացնող վերաբերմունքի կամ պատժի տեսակների դէմ կոնվենցիան:*

*Հրամայական է, որ Ադրբեջանը կատարի միջազգային իրաւունքով ստանձնած իր պարտաւորութիւնները եւ դադարեցնի հայ ռազմագերիների եւ պատանդների իրաւունքները ոտնահարող բոլոր գործողութիւնները: Դա չկատարելը ոչ միայն խաթարում է մարդասիրութեան եւ արժանապատուութեան սկզբունքները, այլեւ սպառնում է տարածաշրջանային կայունութեանը եւ խաղաղութեանը:*

*Մենք պատրաստ ենք աշխատել միջազգային հանրութեան հետ՝ այդ խախտումների վերացման եւ հակամարտութեան հետեւանքով տուժած բոլոր անձանց իրաւունքների պաշտպանութեան ապահովման ուղղութեամբ: Կոչ ենք անում բոլոր պետական դերակատարներին եւ միջազգային կազմակերպութիւններին շարունակել պահանջել անյապաղ եւ անվերապահ ազատ արձակել ապօրինի ադրբեջանական գերութեան մէջ պահուող բոլոր հայերին:*

*Մեր հաւաքական պարտականութիւնն է պահպանել Ժընեւեան կոնվենցիաների եւ մարդու իրաւունքների վերաբերեալ համապատասխան սկզբունքները, ինչպէս նաեւ պաշտպանել ադրբեջանական գերութեան մէջ ապօրինի պահուող բոլոր ռազմագերիների եւ պատանդների արժանապատուութիւնն ու բարեկեցութիւնը»:* ■

# Հայաստանի շարք մը դիւանագէտներու յայտարարութիւնը

**Հայաստանի համար ստեղծուած անվտանգային եւ գոյութենական աննախադէպ վտանգներն ու աշխարհաքաղաքական աճող լարուածութեան ֆոնին օրուայ իշխանութիւնների վարած հակապետական եւ հակազգային արտաքին քաղաքականութիւնը մեզ պարտադրում են հանդէս գալ հետե- ւեալ յայտարարութեամբ:**

*Այսօր հայ ժողովուրդը յայտնուել է ճակատագրական ծանրագոյն հանգրուանում: Մեզ հասցրել են մի վիճակի, երբ մենք կարող ենք կորցնել Հայաստանի Հանրապետութեան ինքնիշխանութիւնը, երկրի տարածքային ամբողջականութիւնը, ազգային ինքնութիւնն ու արժանապատւութիւնը:*

*Ակնյայտ է, որ գործող իշխանութեան որդեգրած պարտուողական եւ միակողմանի զիջումներով լի այսպէս կոչուած խաղաղութեան օրակարգը տապալուել է՝ տուրք տալով ադրբեջանա-թուրքական տանդեմի սպառնալիքներին ու ճնշումներին:*

*Արցախի յանձնումից յետոյ, սեփական իշխանութիւնն ամէն գնով պահպանելու գերնպատակով, ներկայիս վարչախումբը գնում է Հայաստանի Հանրապետութեան ռազմավարական տարածքները միակողմանի զիջելու ճանապարհով:*

*Հէնց այս իշխանութիւնների արկածախնդիր ու մանիպուլատիվ քաղաքականութեան հետեւանքով է Հայաստանը յայտնուել վտանգաւոր, ծանրագոյն նոր կորուստներով յղի իրավիճակում: Այս գահավիժող ընթացքը պէտք է օր առաջ ամէն գնով կանգնեցնել, այլապէս երկիրը կը վերածուի ռազմական մի նոր թատերաբեմի, աշխարհաքաղաքական տարբեր բեւեռների բախման մի նոր կիզակէտի, որտեղ պարտուելու են Հայաստանը եւ հայ ժողովուրդը:*

*Սա չար գուշակութիւն չէ, այլ՝ սթափ, առանց աւելորդ յուզականութեան, իրատեսական եւ մասնագիտական վերլուծութիւն: Այսօր հայ ժողովրդի հետագայ ճակատագիրը լուծւում է Տաւուշում: Ոսկեպարը, Բաղանիսը, Կիրանցը լոկ բնակավայրեր չեն: Ոսկեպարը, Բաղանիսը, Կիրանցը նոյն Երեւանն են, Գիւմրին ու Վանաձորը, Սիսիանը, Կապանն ու Աշտարակը: Տաւուշը Հայաստանի անվտանգութեան ամենաամուր դարպասն է, մեր արժանապատւութեան խարիսխը եւ համբերութեան սահմանը: Ներկայիս իշխանութիւնները, հանդիսանալով ստեղծուած ծայրայեղ ծանր իրավիճակի հիմնական պատասխանատուն, ունակ չեն փոխել առանց այն էլ ֆիկտիւ բնոյթ կրող բանակցային գործընթացի տրամաբանութիւնը կամ առաջարկել իրատեսական լուծումների այնպիսի փաթեթ, որը հնարաւորութիւն կը տայ կանգնեցնել զիջումների անվերջ շղթան: Աւելին, իշխանութիւնն ինքը սեփական ժողովրդին սպառնում է պատերազմով՝ փորձելով հասարակութեան լայն շրջանակներին համոզել այլընտրանքի բացակայութեան մէջ՝ այսպիսով ուղղակիօրէն սպասարկելով ադրբեջանա-թուրքական տանդեմի օրակարգը:*

Հայաստանն այս չափազանց բարդ վիճակից դուրս բերելու եւ հետագայ անդառնալի կորուստներից զերծ պահելու համար՝ անհրաժեշտ են հետեւեալ անյետաձգելի քայլերը.

1. Արտաքին քաղաքական ընթացիկ օրակարգի սկզբունքային փոփոխութիւն՝ բացառելով հակառուսականութիւնը կամ հակաարեւմտականութիւնը կամ որեւէ այլ հակա-ներով ձեւաւորուած արտաքին քաղաքական բովանդակութիւն՝ չէզոքացնելու համար ադրբեջանա-թուրքական անյագ նկրտումները



2. Աշխարհակարգի սրընթաց փոփոխութիւնների եւ անորոշութեան պայմաններում բացառել արտաքին քաղաքական կտրուկ շրջադարձերը եւ դիրքաւորումները

3. Իրավիճակի հետագայ սրացումը թոյլ չտալու եւ իրական խաղաղութեան հաստատման, ինչպէս նաեւ սահմանազատման եւ սահմանագծման համար բարենպաստ պայմաններ ապահովելու նպատակով, առկայ եւ իրավիճակային դաշնակիցներին, ինչպէս նաեւ միջազգային հեղինակաւոր կառոյցներին փոխադարձ շահագրգռուածութեան հենքի վրայ դրդել անյապաղ միջոցներ ձեռնարկել Ադրբեջանի կողմից շանտաժի եւ սպառնալիքի քաղաքականութիւնը կասեցնելու եւ նոր տրամաբանութեամբ բանակցային համապատախան միջավայր ձեւաւորելու համար՝ այդ ուղղութեամբ կիրառելով դիւանագիտական ողջ գործիքակազմը

4. Հաշուի առնելով ներկայիս համազգային ճգնաժամն, անհրաժեշտ է համայն հայութեան ներուժի համախմբումը եւ ներհանրային հաշտեցումը՝ Հայաստանի Հանրապետութեան անկախութեան, ինքնիշխանութեան, տարածքային ամբողջականութեան եւ անվտանգութեան ապահովման առաջնային օրակարգի շուրջ:

*Վերոնշեալ մարտահրաւէրներին դիմակայելու եւ առկայ խնդիրների լուծումները կեանքի կոչելու նպատակով, Հայաստանի Հանրապետութիւնը կարիք ունի որակապէս նոր իշխանութիւնների, որոնք յստակ յանձնառութիւն եւ պատասխանատւութիւն կը ստանձնեն տարածաշրջանում տեւական կայունութեան եւ արժանապատիւ խաղաղութեան համար:*

ԱՐԱ ԱՅՎԱԶԵԱՆ - ՀՀ արտակարգ եւ լիազօր դեսպան

ԱՇՈՏ ՂՈՒԼԵԱՆ - Արցախի Հանրապետութեան արտակարգ եւ լիազօր դեսպան

ԱՒԵՏ ԱԴՈՆՑ - ՀՀ արտակարգ եւ լիազօր դեսպան

ԳԱԳԻԿ ՂԱԼԱՉԵԱՆ -ՀՀ արտակարգ եւ լիազօր դեսպան

ՎԱՀԱԳՆ ՄԵԼԻՔԵԱՆ - ՀՀ արտակարգ եւ լիազօր դեսպան

ՌՈՒԲԷՆ ԿԱՐԱՊԵՏԵԱՆ - ՀՀ արտակարգ եւ լիազօր դեսպան, պատմական գիտութիւնների դոկտ., պրոֆեսոր

ՖԱԴԷՅ ՉԱՐՉՕՂԼԵԱՆ - ՀՀ արտակարգ եւ լիազօր դեսպան

ԱՐՄԷՆ ԳԻՉԵԱՆ - ՀՀ արտակարգ եւ լիազօր դեսպան

ՎԱՀԷ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ - ՀՀ ԱԺ նախկին պատգամաւոր, ԵԽԽՎ հայկական պատուիրակութեան նախկին անդամ

ԱՐՏԱԿ ԲՇՏԻԿԵԱՆ - ՀՀ պաշտպանութեան նախարարի նախկին խորհրդական ■

# Նիկոլի «խաղը» Հայաստանից կարող է թողնել միայն պատմական յիշողութիւն



*ՀՀ Անվտանգութեան խորհրդի քարտուղարը յայտնել է, որ Ապրիլի 5-ին Բրիւսէլում տեղի կ'ունենայ ՀՀ վարչապետի հանդիպումը ԱՄՆ պետքարտուղար Էնտոնի Բլինկենի եւ Եւրայանձնաժողովի նախագահ Ուրսուլա ֆոն դեր Լայենի հետ: «Արմենպրես»ի հաղորդմամբ՝ «կողմերը նախատեսում են քննարկել եռակողմ համագործակցութեան ուղիները, որոնք կը նպաստեն Հայաստանի զարգացմանը», ինչպէս նաեւ «Հայաստանի կայունութեան բարձրացմանն ուղղուած միջոցառումները»: Նշենք՝ այս միջոցառման մասին յայտարարուել էր դեռեւս անցեալ տարի՝ Հոկտեմբերի 5-ին, իսպանական Գրանադայում, Փաշինեանի եւ ֆոն դեր Լայենի հանդիպման արդիւնքներով: Այդ ժամանակ Եւրայանձնաժողովի ղեկավարը Հայաստանի վարչապետին պատմել է Եւրամիութեան եւ ԱՄՆ-ի համատեղ միջոցառման նախապատրաստման մասին, որն ուղղուած կը լինի Հայաստանին աջակցելուն: Սակայն Երեւանն այդ պահին համապատասխան պայմաններ չունէր եւրոպամէտ թրենդն այդքան բացայայտ մատնանշելու համար: Դրանք հիմա էլ այնքան էլ ակնյայտ չեն, թէեւ, ըստ Հայաստանի փոխարտգործնախարար Վահան Կոստանեանի յայտարարութեան, Բրիւսէլի եւ Երեւանի յարաբերութիւնները սկսել են «զարգանալ աննախադէպ ակտիւութեամբ»: Խօսքն առայժմ վերաբերում է Հայաստանի եւ Ադրբեջանի սահմանին ԵՄ դիտորդական առաքելութեան յայտնուելուն, վիզային ռեժիմի ազատականացման շուրջ բանակցութիւններին, «Խաղաղութեան եւրոպական հիմնադրամի» Հայաստան մուտքի հասանելիութեանը, ինչպէս նաեւ եւրոպական շուկաներ հայկական արտադրանքի հասանելիութեան քննարկմանը:*

*Բայց դա բաւարար չէ «Ռուսաստանից պոկուելու» համար՝ հաշուի առնելով տնտեսութեան ոլորտում Ռուսաստանից Հայաստանի բարձր կախուածութիւնը: Ինչ վերաբերում է անվտանգութեան խնդիրներին, ապա Երեւանը պատրաստւում է «ռուսական հովանոցը» փոխել արեւմտեանով: Նա կարծում է՝ նման «փոխատեղումը» կարող է արգելափակել Ադրբեջանի հնարաւոր աշխարհաքաղաքական նկրտումները: Ուստի կայուն զգացողութիւն է ստեղծւում, որ այս փուլում Նիկոլը ձգտում է նախ՝ Ադրբեջանի հետ յարաբերութիւններում առկայ խնդիրները հասցնել Ա- րեւմուտք-Արեւելք դիմակայութեան մակարդակի, եւ երկրորդ՝ Ադրբեջանի հետ խաղաղութեան պայմանագրի ստորագրման գործընթացը մտցնել հակառուսական հիմքով Հայաստան-Ադրբեջան-Թուրքիա ձեւաչափ՝ արեւմտեան երաշխիքներով: Բացի այդ, Երեւանում կարծում են, որ Ադրբեջանի տարածքային ամբողջականութեան գործօնի ճանաչումից յետոյ վերացել են Բաքուի հետ խաղաղութեան հաստատման սկզբունքային բնոյթի տարաձայնութիւնները, իսկ սահմանազատման հարցերը, որոնց պատճառով բարդութիւններ են ի յայտ գալիս, կարող են լուծուել նոր պայմաններում եւ նոր հիմքերով:*

*Ահա թէ ինչու Նիկոլի՝ Բրիւսէլում կայանալիք հանդիպումը Բլինկենի եւ ֆոն դեր Լայենի հետ ընկալւում է որպէս ազդանշան Մոսկուային, իսկ Բաքուին եւ Անկարային ցուցադրւում են «եւրոպական նկրտումներ»: Այս համատեքստում կարելի է համաձայնել այն փորձագէտների կարծիքին, ովքեր կարծում են՝ «Նիկոլն Անդրկովկասում կրկնում է Զելենսկու սցենարը՝ օգտագործելով այն նոյն տեխնոլոգիաները, որոնք օգտագործել եւ օգտագործում է Կիեւը»: Ընդ որում, կասկած չկայ, որ հիմք է նախապատրաստւում ռուսական 102-րդ ռազմակայանի դուրսբերման եւ Հայաստանի՝ «յարմար պահին» ՀԱՊԿ-ից դուրս գալու որոշումների ընդունման համար: Ի դէպ, ըստ ամենայնի, այս հարցը Նիկոլը քննարկել է Մարտի 23-ին Գիւմրու տեխնոպարկում՝ ՔՊ կուսակցութեան ղեկավարութեան եւ մտերիմների հետ հինգժամեայ փակ բանակցութիւնների ժամանակ: Նկատենք՝ Ռուսաստանի ռազմական ներկայութիւնը Գիւմրիում Ադրբեջանի եւ Թուրքիայի կողմից որպէս սպառնալիք չի դիտարկւում:*

*Այժմ դրուած է Արեւմուտքի հետ յարաբերութիւններում ռուսական, ադրբեջանական եւ Թուրքական «խաղաքարտերով» խաղալու Նիկոլի ունակութեան հարցը՝ արտաքին քաղաքականութեան եւ ղարաբաղեան ուղղութեամբ իր նախկին ձախողումները ծածկելու նպատակով: Առայժմ փաստ է, որ արեւմտեան հարթակներում Ադրբեջանի հետ բանակցային գործընթացը Երեւանին ոչ մի արդիւնք չի տուել: Հիմա գոհասեղանին են նետւում ՀԱՊԿ-ն ու Ռուսաստանի հետ յարաբերութիւնները՝ Արեւմուտքի կողմից ինչ-որ դիվիդենտների ակնկալիքով: Դեռեւս դրանք սահմանուած չեն նկատելի յստակութեամբ: Նիկոլը միայն քննադատում է Ռուսաստանին եւ ՀԱՊԿ-ին, մինչդեռ հայ-ռուսական երկկողմ յարաբերութիւնների դադարեցման մասին չի խօսւում: Նոյնիսկ ռազմական համագործակցութեամբ Երեւանը դեռ չի անցնում «կարմիր գծերը», թէեւ մտադիր է Արեւմուտքին թանկ վաճառել Մոսկուայի հետ իր «ապահարզանը»: Այն դէպքում, եթէ Նիկոլը Բրիւսէլում Արեւմուտքից չստանայ ինչ-որ լուրջ տնտեսական եւ այլ օգնութիւն, իսկ աւելի ճիշտ՝ Հայաստանն իր խնամքին վերցնելու համաձայնութիւն, ապա նա զերծ կը մնայ կոնկրետ հակառուսական քայլերից:*

*Միւս կողմից, Բաքուն եւ Անկարան նոյնպէս հաշուարկում են Անդրկովկասում արեւմտեան մոդերացիայի ի յայտ գալու հնարաւորութիւններն ու հեռանկարները՝ դա ընկալելով որպէս արտաքին խաղացողների շրջանակի ընդլայնում՝ առանց տարածաշրջանային անվտանգութեան ապահովման պարտաւորութիւնների, որպէս Արեւմուտք-Արեւելք լայն դիմակայութեան մէջ ներքաշուելու սցենար՝ ուժերի առկայ հաւասարակշռութեան վերանայման միջոցով: Միեւնոյն ժամանակ, Հայաստանի համար արտաքին ուժերի շահերի դիմակայութեան էպիկենտրոնում յայտնուելու դիրքորոշումը յղի է հսկայական վտանգներով, քանի որ այն կարող է Ուկրաինայի պէս դառնալ ընդամէնն աշխարհաքաղաքական գործիքակազմ: Եթէ գործն այսպէս շարունակուի, ապա Հայաստանից կարող է մնալ միայն «պատմական յիշողութիւնը»:*

**Ստանիսլաւ Տարասով**

*iarex.ru, 25 Մարտ 2024*

*Հրապարակման պատրաստեց՝*

**Գայիանէ Մանուկեան**

# Արցախի վերաբերեալ քննարկումներ Բելգիայի Սենատում

**(Շար. Ա. էջէն)**

*Ղարաբաղի ժողովրդի տառապանքները շարունակուեցին 2023 թուականի Սեպտեմբերի բռնի տեղահանութիւնից յետոյ: Հայաստան ժամանելուն պէս Արցախի ժողովուրդը շարունակեց բախուել բազմաթիւ մարտահրաւէրների՝ նրանց կացութեան կարգավիճակից սկսած մինչեւ սոցիալական, բնակարանային, սննդի եւ աշխատանքի հետ կապուած խնդիրները: Սեմինարը արժէքաւոր հնարաւորութիւն է ընձեռում անդրադառնալու այս խնդիրներին եւ լոյս սփռելու Արցախի ժողովրդի առօրեայ պայքարի վրայ, ինչպէս նաեւ նպաստելու միջազգային հանրութեան մոբիլիզացմանը՝ Արցախի ժողովրդի մարդասիրական կարիքների եւ իրաւունքների պաշտպանութեան գործում»:*

*Բենիամին Պօղոսեանը շեշտադրել է Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ բանակցութիւնների հարցի քննարկումը՝ յայտարարելով. «Կար սկզբունքօրէն թերի տրամաբանութիւն, որ Ադրբեջանի նկատմամբ հանդարտեցման քաղաքականութիւնը եւ Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան կործանման ընդունումը ճանապարհ կը հարթեն Հայաստան-Ադրբեջան խաղաղութեան համար: փոխարէնը, դա միայն ստիպեց Ադրբեջանին աւելի ագրեսիւ լինել Հայաստանի նկատմամբ, եւ այժմ բախւում ենք Ադրբեջանի կողմից նոր էսկալացիայի իրական սպառնալիքի՝ ռազմավարական նպատակ ունենալով բացել ցամաքային միջանցք Նախիջեւանի եւ Թուրքիայի հետ՝ օկուպացնելով Հայաստանի որոշ հատուածներ»:*

*Իր խօսքում Գասպար Կարապետեանը երախտագիտութիւն է յայտնել սենատոր Դեմեսմէյքերին, բանախօսներին եւ ներկաներին՝ արցախահայութեան իրաւունքներին իրենց աննկուն հաւատարմութեան համար: «Այս կլոր սեղանը կարեւոր հարթակ է ծառայում երկխօսութեան խթանման եւ Արցախի հայ բնակչութեան անքակտելի իրաւունքների պաշտպանութեանն ուղղուած ջանքերն առաջ մղելուն: Բելգիայի եւ Եւրամիութեան անդամ բոլոր երկրների համար հրամայական է ճնշում գործադրել Ադրբեջանի դէմ՝ Արցախի ժողովրդի դէմ իրականացուած էթնիկ զտումների համար՝ փաստացի վերջ դնելով Ադրբեջանի անպատժելիութեանը: Միջազգային հանրութիւնը պէտք է ճնշում գործադրի Ադրբեջանի վրայ՝ Բաքւում գտնուող բոլոր հայ ռազմագերիներին ու պատանդներին ազատ արձակելու համար: Շարունակական շահերի պաշտպանութիւնը մնում է առանցքային՝ տարածաշրջանում խաղաղութեան, արդարութեան եւ կայունութեան ապահովման համար»:*

*Քննարկումն աւարտուել է հարցուպատասխանի ձեւաչափով, որի ընթացքում բանախօսներն ու քաղաքական գործիչները քննարկել են Հարաւային Կովկասում խաղաղութեան հաստատման եւ Արցախի հայ բնակչութեան հիմնարար իրաւունքների պաշտպանութեան հեռանկարային միջոցները:*

**ՀՅԴ Բիւրոյի Հայ դատի կենտրոնական գրասենեակ**

**25.03.2024**

# Մանրամասներ Կիրակի օրուան նռնակներով յարձակումէն

*Ներքին նախարարութիւնը մանրամասներ ներկայացուցած է Նոր Նորքի ոստիկանութեան բաժանմունքի վրայ զինուած յարձակման մասին եւ հրապարակած է տեսանիւթ:*

*Այսպէս՝ Մարտի 24-ի ժամը 17:00-ի մօտ, նռնակներով զինուած երեք անձ մօտեցած են ներքին նախարարութեան ոստիկանութեան Նոր Նորքի բաժնի հերթապահ մասի բաց պատուհանին, սպառնացած են ձեռքի նռնակներով պայթեցնել հերթապահ մասը:*

*Ոստիկանութեան ծառայողը փակած է պատուհանը, որմէ ետք սպառնացող անձն իր ձեռքի նռնակներէն մէկը նետած է, որ պայթած է ոստիկանութեան բաժնի վարչական շէնքի մուտքի դրան դիմաց: Պայթումի հետեւանքով նշուած անձերէն երկուքը ոտքերու շրջանին ստացած են վնասուածքներ եւ տեղափոխուած բժշկական կեդրոն:*

*Երրորդ անձը՝ նռնակները ձեռքը պահած, շարունակած է սպառնալ, որ կը պայթեցնէ զինքը:*

*Դէպքի վայր ժամանած են ոստիկանութեան տարբեր ստորաբաժանումներու ծառայողներ՝ ոստիկանութեան պետ-ներքին նախարարի տեղակալ, ոստիկանութեան զօրավար-մայոր Արամ Յովհաննիսեանի գլխաւորութեամբ, իրաւապահ այլ կառոյցներու ծառայողներ:*

*Սկսած են բանակցութիւններ: Որոշ ժամանակ անց նռնակներով զինուած 34-ամեայ Մ. Հ.-ն ներքին նախարարութեան ոստիկանութեան եւ Ազգային անվտանգութեան ծառայութեան ծառայողներու կողմէ վնասազերծուած է: Անոր մօտ յայտնաբերուած են չորս նռնակներ:*

*Ձեռնարկուած միջոցառումներով պարզուած է, որ նռնակն առերեւոյթ պայթեցուցած անձը կը հանդիսանայ 55-ամեայ Ա. Մ.-ն: Պայթումի հետեւանքով վնասուածքներ ստացած են 55-ամեայ Ա. Մ.-ն եւ 51-ամեայ Վ. Գ.-ն, որոնք տեղափոխուած են բժշկական կեդրոն:* ■

# Ճանչնանք մեր բառերը (7)

## 1. Առաւօտեան

«Ազդակ»-ի քաղաքական էջին սիրած եւ մեծ յաճախականութեամբ կիրարկած,– եւ ուրեմն տարածած,– մէկ բառն է այս, ինչպէս այսօր, օրինակ՝

– Շաբաթ **առաւօտեան** Դիմադրութիւնը հաղորդեց, որ մարտիկները **առաւօտեան** կանուխ ժամերուն վար առած են անօդաչու սարք մը (20/11/23, էջ 1, ա. սիւնակ):

Քերականական վերլուծումը ցոյց կու տայ, որ այս երկու կիրարկութիւններէն՝

– առաջինը մտածուած է իբրեւ մակբայ՝ «**առաւօտեան հաղորդեց**»:

– երկրորդը մտածուած է իբրեւ ածական՝ «**առաւօտեան ժամերուն**»:

Լեզուական նման լարախաղացութիւն մը «Ազդակ»ի քաղաքական էջը չցուցաբերէր, հապա ո՞վ պիտի համարձակէր, ո՞վ կրնար երազին մէջ մտածել նման բան մը:

***

**Առաւօտ** բառը գրաբարի սիրածներէն էր. աշխարհաբարն ալ կը կիրարկէ զայն վայելչօրէն, սակայն նախընտրածը առտու գոյականն է.

**առտու – առտուան– առտուանէ – առտուանով**

Իսկ առաւօտը կու տայ՝

**առաւօտ – առաւօտու(ն) – առաւօտէ(ն) – առաւօտով**

Ինչպէս կը տեսնենք, այս յարացոյցին մէջ **առաւօտեան** չկայ. այսպէս էր գրաբարի մէջ, այսպէս է աշխարհաբարի մէջ եւս՝ որդի ի նմանութիւն մօր իւրոյ: Տարբեր ալ չէր կրնար ըլլալ:

Չկայ, որովհետեւ **առաւօտեան**-ը ածական է.

– **առաւօտեան ժամ, առաւօտեան լոյս, առաւօտեան ցօղ, առաւօտեան արշալոյս**…

Եւ ուրեմն չի կրնար հոլովական յարացոյցի մաս կազմել: Ան ածական էր գրաբարի մէջ եւս, որուն հարազատ ժառանգորդն է աշխարհաբարը:

Դժուար չէ տարրական պարկեշտութեան ու բարեխղճութեան թելադրանքով՝ բանալ կարգ մը բառարաններ՝ գրաբար թէ աշխարհաբար, եւ հաստատել այս բոլորը: Նայիրիի «Հայերէն բառարաններ» կայքը բոլոր միջոցները կ'ընծայէ հետաքրքրուողին:

***

2. Այս վերլուծումի հետեւութիւնը պիտի ըլլայ այն, որ ճիշդ կիրարկուածը երկրորդն է՝ «**առաւօտեան ժամերուն**», այսինքն՝ ածական որոշիչ + գոյական որոշեալ:

– Ո՞ր կամ ինչպիսի՞ ժամերուն… **առաւօտեան**:

Գալով առաջինին… բառային ահարկու լղրճուկ մըն է այս:

Ինչո՞ւ:

– **Առաւօտեան** ածականը, ուրեմն, այստեղ առնուած է իբրեւ մակբայ եւ դրուած է «հաղորդեց» բային վրայ. սա առաջին սայթաքումն է: Իսկ երկրորդը՝

– **Առաւօտեան** ածականին տրուած է **շաբաթ** օրանունը իբրեւ որոշիչ… **առաւօտեան** ենթադրեալ որոշիչին. այսինքն՝ ածականը որոշադրուած է գոյականով մը… գացէք փորձեցէք նման բան մը, տեսնենք պիտի յաջողի՞ք:

Այսպիսի բաներ կրնան պատահիլ մի՛այն «Ազդակ»ի քաղաքական էջերուն մէջ:

Անոր կը հետեւի «Արարատ»ը՝ «Հզպալլա **առաւօտեան** բացումը կատարեց ծանր հրթիռներով…»:

Եզակի, ըսել կ'ուզեմ՝ եզական, առանձնայատկութիւն մըն է այս, որուն կառչած են այս կիրարկութեանց քաջազուն մատակարարները:

Իսկ ո՞ւր է լուծումը:

3. Լուծումը նախ եւ առաջ… լուծումի որոնումի ցանկութեան մէջ է:

Հոն, ուր յամառօրէն կը խուսափինք լուծում փնտռելէ եւ մեր ականջները կը խցենք ամէն առաջարկի յանդիման, իրերը կը մնան այնպէս, ինչպէս որ եղած են ու կան այս էջին վրայ:

Ուրեմն՝ լուծումը. ահաւասիկ.

– «Շաբաթ **առաւօտուն** Դիմադրութիւնը հաղորդեց, որ…»:

Ճիշդ ի՞նչ ըրինք. **առաւօտեան** ածականը, որ չի կրնար ժամանակի պարագայ դառնալ **հաղորդեց** ու **կատարեց** բայերուն, փոխարինեցինք **առաւօտ** գոյականի տրական հոլովով. սա հայերէնի ոգիին հետ բոլորովին հաշտ լուծում է. հայերէնը միշտ ալ տրական հոլովը կրնայ կիրարկել իբրեւ բայական ժամանակի պարագայ. օրինակ՝

– Ես քեզ սիրի աշնան **հովին**:

(Ե՞րբ սիրեցի - աշնան **հովին**՝ տրական հոլով)

– Այս ուշ **գիշերին**… գնում է ահա մի մտամոլար ու հիւանդ տղայ:

(Ե՞րբ կ'երթայ… ուշ **գիշերին**՝ տրական հոլով)

– **Աշնան** կ'երթաս երկիր, եարիս բարեւէ:

(Ե՞րբ կ'երթաս… **աշնան**՝ տրական հոլով):

– Մշուշ ու ստուերք **արշալոյսին** կը հալին:

(Ե՞րբ կը հալին… **արշալոյսին**՝ տրական հոլով)

– **Առաւօտուն** Աբիսողոմ աղան ելաւ անկողինէն:

(Ե՞րբ ելաւ… **առաւօտուն**՝ տրական հոլով)

Կը նկատէ՞ք, որ Պարոնեան չէ ըսած՝ «**առաւօտեան ելաւ**»:

Իսկ **առաւօտուն** գոյականը կրնա՞յ իր վրայ **շաբաթ** գոյականը իբրեւ որոշիչ ստանալ, այլ խօսքով՝ գոյական մը կրնա՞յ դառնալ այլ գոյականի մը որոշիչը. այո, կրնայ դառնալ, այս եւս հայերէնի ոգիին բոլորովին հաշտ է. օրինակ՝

– **ոսկի** աշուն – ինչպիսի՞ աշուն՝ **ոսկի**

– **քար** սիրտ – ինչպիսի՞ սիրտ՝ **քար**

– **բոց** աչքեր – ինչպիսի աչքեր՝ **բոց**

Այնպէս ալ՝ **Երկուշաբթի օր… Չորեքշաբթի օր… Շաբաթ օր**, ուրեմն՝ **Շաբաթ առաւօտ**:

***

– Գլուխնիդ բան մը մտա՞ւ,– վերապահօրէն կը հարցնէր Մուշեղ Իշխան՝ յետ տեսնելով մեր յուսահատ դէմքերը եւ տարտամ, անորոշ ու ծանծաղ նայուածքները:

– Այո՛, պարոն, ամ-մէ՛ն բան հասկցանք,– առաջինը կը պատասխանէր Եղիշէ Խոստեղեանը՝ ինքնավստահ շեշտելով **ամ-մէ ՛ն**-ը, ինքը՝ դասարանին ամէնէն մանրակազմ եւ սնդիկի պէս անհանդարտ, միշտ շուարած ու ոչինչ հասկցող մանչը:

–Կը տեսնենք, կը տեսնենք,– ճաղատ ու բազմիցս փորձուած գլուխը թերահաւատ շարժելով կ'ելլէր-կ'երթար՝ ապաւինելով ներգործութեանը Սուրբ հոգիին, որ միշտ ալ կը մոռնար մեր դասարանցիներուն այցելել: Իսկ հիմա՝

–Բան մը հասկցա՞ք,– հարցնելու հերթը իմս է:

**Արմենակ Եղիայեան**
**armenag@gmail.com**

# Արամ Ա. Կաթողիկոս Ընդունեց Քաղաքական Երեք Կուսակցութիւններու Լիբանանի Ներկայացուցիչները



*Շաբաթ, 23 Մարտ 2024-ին, Արամ Ա. Վեհափառ Հայրապետին այցելեցին հայ քաղաքական երեք կուսակցութիւններու Լիբանանի ներկայացուցիչները՝ Վանիկ Տագէսեան (ՍԴՀԿ), Յակոբ Բագրատունի (ՀՅԴ) եւ բժիշկ Աւետիս Տագէսեան (ՌԱԿ):*

*Կուսակցութիւններու ներկայացուցիչները վեհափառ Հայրապետին պարզեցին Հայոց ցեղասպանութեան 109-րդ ամեակին առիթով քաղաքական երեք կուսակցութիւններու նախաձեռնութեամբ տեղի ունենալիք աշխատանքները ու ժողովրդային ձեռնարկները:*

*Նորին սրբութիւնը ողջունեց միջ-կուսակցական գործակցութիւնը, յատկապէս համահայկական ու համայնքային հարցերու ու նախաձեռնութիւններու գծով: Ան շեշտեց լիբանանահայ մեր ժողովուրդի զաւակներուն մասնակցութեան անհրաժեշտութիւնը Ապրիլ 24-ի առիթով տեղի ունենալիք ձեռնարկներուն, ինչպէս նաեւ կայանալիք եկեղեցական ու ժողովրդային հաւաքներուն՝ ցոյց տալու մեր շրջապատին ու յատկապէս ցեղասպաններուն, մեր ժողովուրդին հաւաքական կամքն ու պահանջատիրական աննկուն ոգին:* ■

# Սողոմոն Թեհլիրեանի կիսանդրի՝ Մարսէյի մէջ



*15 Մարտ 2024-ին, Մարսէյի մէջ, քաղաքապետութեան նախաձեռնութեամբ եւ որոշումով (Հայ Համայնքի առաջարկով եւ գործակցութեամբ) բացումը կատարուեցաւ Սողոմոն Թեհլիրեանի կիսանդրիին: Բացման թուականը յատկանշական է անշուշտ եւ զուգադիպութիւն չէ՝ Թալէաթի զգետնման օրը…*

*Քաղաքական պաշտօնական բազմաթիւ անձնաւորութիւններու եւ մեծաթիւ հայորդիներու ներկայութեան տեղի ունեցած այս արարողութեան ֆրանսերէն լեզուով խօսք առաւ նաեւ ՀՅԴ Արեւմտեան Եւրոպայի Կեդրոնական Կոմիտէի ներկայացուցիչ ընկեր Հրաչ Վարժապետեան, որ կատարելէ ետք Դաշնակցութեան 9-րդ Ընդհանուր ժողովի կողմէ որոշուած ապա նաեւ երեք տարիներու վրայ կատարուած «Նեմեսիս» գործողութեան ամբողջ պատմականը, ըսաւ.*

*«Սիրելի բարեկամներ,*

*Ի՞նչ պիտի ըսէր Սողոմոն Թեհլիրեանը, եթէ այսօր մեր մէջ ըլլար:*

*Ես ինծի յաճախ այս հարցը կու տամ:*

*Եւ ես, հաստատ համոզուած եմ, որ 2024 թուականի Մարտ 15-ին անոր ուղերձը պիտի ըլլար հետեւեալը.*

*Այս մութ օրերուն, երբ վտանգը համատարած է մեր ամբողջ ազգին համար, երբ այնքան արիւն թափած է, երբ մեր հերոսներով լեցուն է մեր սրբավայր Եռաբլուրի պանթէոնը ու անոնք դեռ չեն կրնար գտնել իրենց հանգիստը, Հայաստանի իշխանութիւնները կը համարձակին « բնականոն յարաբերութիւններ հաստատել եւ արագօրէն բանալ սահմանները էրտողանի Թուրքիոյ հետ, մեր ժամանակներու ամենէն վատ բռնապետին հետ:*

*Մինչ արցախցի մեր հայրենակիցները կը հալածուին իրենց պապենական հողերէն, նոր գաղթականութեան կ'ենթարկուին, թշնամի Ատրպէյճանը կը գրաւէ անոնց տուները եւ հողերը, կը քանդէ այն ամէնը, ինչ որ անոնք կառուցած են, այս նոյն իշխանութիւնը կը համարձակի խօսիլ Ալիեւ դահիճին հետ հաշտութեան պայմանագրի մասին:*

*Ի՞նչ եւ ո՞ր խաղաղութեան մասին է խօսքը: Այն պետութեան, որ սահմանին վրայ կը շարունակէ իր սպառնալիքները՝ ամենօրեայ յարձակումները բազմապատկելո՞վ: Կամ այն պետութեան հետ, որ երէկուան եւ այսօրուան մեր թշնամին է եւ, որ կ'ուզէ որ մենք ընդմիշտ անհետանա՞նք:*

*Քանի դեռ Թուրք-ատրպէյճան այս երկու եղբայրները կը շարունակեն իրենց սպառնալիքները եւ չեն արտօներ, որ հայ ժողովուրդը խաղաղ ապրի իր պապենական հողերուն վրայ, Ո՛Չ հաշտութիւն, Ո՛Չ պայմանագիր, Ո՛Չ խաղաղութիւն կարելի է նախատեսել:*

*Միակ պայմանագիրը, որ մենք կը ճանչնանք՝ Սեւրի պայմանագիրն է, եւ միայն Թուրքիոյ կողմէ զայն կիրարկելու պարագային է, որ կրնան սկսիլ յարաբերութիւնները՝ Երեւանի եւ Անգարայի միջեւ»:*

*Ահա թէ ի՛նչ կը յայտարարէր մեր ազգային հերոս Թեհլիրեանը, եթէ մեր մէջ գտնուէր այսօր»:* ■

# Ս. Մեսրոպ-Արապեան վարժարանի 45-րդ տարեդարձը




*Հովանաւորութեամբ Ֆրանսայի թեմի առաջնորդ Գրիգոր վրդ. Խաչատուրեանի, Մարտի 2-ին Ս. Մեսրոպ-Արապեան վարժարանը տօնեց իր հիմնադրութեան 45-րդ տարեդարձը: Այս առթիւ վարժարանին հայերէնի ուսման պատասխանատու՝ Նորա Թաշճեան, պատրաստած էր Ս. Մեսրոպ կրթարանի 45 տարուան պատմութիւնը ներկայացնող ցուցահանդէս մը:*

*Սեւան Անանեան ներկայացուց Ալֆորվիլի հայ գաղութի կազմութեան հոլովոյթը: Յովհաննէս Գույումճեան կեդրոնացաւ Ս. Մեսրոպ կրթարանի հիմնադրութեան ու զարգացման պատմութեան վրայ:*

*Նախկին սաներէն Ֆիլիփ Արսլան եւ Սելին Պուրմրշրեք խօսք առին՝ իբրեւ աշակերտ իրենց փորձառութիւնը պատմելու եւ երախտագիտութիւն յայտնելու: Ապա դպրոցի Խնամակալ մարմինի նախագահ Քրիսթինէ Գաբրիէլեան շնորհակալութիւն յայտնեց Ալֆորվիլի քաղաքապետին՝ մանկապարտէզի շինարարութիւնը իր աւարտին հասցնելու նպատակով անոր կատարած 250 հազար եւրոյի առատաձեռն նուիրատուութեան համար:*

*Ցուցահանդէսի պաշտօնական բացումին զուգահեռ, գործադրուեցաւ գեղարուեստական յայտագիր. Սոնա Գրիգորեան (դաշնակ), Շուշաննա Վարդանեան (ջութակ), որոնք մեկնաբանեցին Բաբաջանեանի, Կոմիտասի եւ Արամ Խաչատուրեանի յօրինումներէն, իսկ Պօղոս Եղիազարեան մեկնաբանեց Աւետիք Իսահակեանի բանաստեղծութեան վրայ յօրինուած «Օտար, ամայի ճամբէքի վրայ» երգը:* ■

ՄԱՐՏԻԿ ԵՒ ՌՈՒԲԷՆ
ԹԵՐՋԻՊԱՇԵԱՆ ԵՂԲՔ.



ԳՈՀԱՐԱՎԱՃԱՌ

ՈՍԿԻԻ ԳԻՆԸ
ԵԳ: ԹՂԹ:

| | |
|---|---|
| ՈՍԿԵԴՐԱՄ | 24721 |
| 21 ԿԻՐԱՏ | 3090 |
| 18 ԿԻՐԱՏ | 2649 |

Հեռ. 23901151

Address : Teraa Boulakia st., El Kolaly - Cairo
Tel : 202 - 25776857 - Fax : 202 - 25780426
E-mail : housaper1915@gmail.com

Տարեկան Բաժանորդագրութիւն
Եգիպտոս 120 Ե.Ո.
Արաբ. Երկիրներ 60 $
Արտասահման 120 $

العنوان : ٥٦ شارع الترعة البولاقية القللي – القاهرة - ص ب / ٨٦٨ القاهرة
رقم الفكس : ٢٥٧٨٠٤٢٦ – ٢٠٢ - رقم الهاتف : ٢٥٧٧٦٨٥٧ - ٢٠٢
البريد الالكتروني : housaper1915@gmail.com